մի խեղճ մարդ պատահեր։ Շատ գյուղերի աղքատ ընտանիքները օրհնում էին քահանայի կյանքը յուր արած բարերարության համար»[1]։

Այս հատվածները ցույց են տալիս, որ առաջին գաղափարական հայ ավազակը գիտակցում էր սոցիալական անհավասարության անարդարությունը և յուրովի կռվում նրա դեմ։ Սակայն շարունակության մեջ տեսնում ենք, որ նրա միտքն ամուր կաշկանդված է կրոնի կապանքներով. մի կողմից նա ուժով պաշտպանում է ճնշվածներին ու հարստահարվածներին, մյուս կողմից այս բանը մեղք է համարում և արտասուք թափելով ապաշխարում։

«Հայոց եկեղեցական օրենքին համաձայն,— պատմում է Արարատյանը,— պատարագիչ քահանան պարտական է յուր մեղքերը խոստովանել ուրիշ քահանայի։ Պատահում էր, որ եթե Մզրախն ուզում էր խոստովանել, քահանաներից մի քանիսն անարգում էին նրա վարմունքը և հրաժարվում էին խոստովանեցնելուց։ Մզրախը նրանց երկյուղ տալով ստիպում էր, որ իրան խոստովանեցնեն և վրեժխնդիր լինելու սպառնալիքով հարկադրում էր իրան թողություն տալ։ Որքան և խորթ է թվում մեզ նրա արարքը, բայց Մզրախն այնպիսի կատարյալ զղջմամբ և այնքան վշտաբեկ սրտով էր իր մեղքերը քավում, որ նրա հոգու անկեղծությունն իր թափած դառը արտասուքների հետ պարզ արտափայլում էր։ Այս բանը միաձայն վկայում էին նրա խոստովանեցնող բոլոր քահանաները՝ չնայելով, որ շատերը Մզրախին յուր կոպիտ բնավորության և կամայականության պատճառով չէին սիրում»։

Զափազանց ուսանելի է պատմաբանի ու ամեն ընթերցողի համար հիշել, թե մեր աշխարհի կենտրոնում, Արարատյան դաշտում առաջին գաղափարական հայ ավազակի գործերը որ թվականներին են կատարվում։

1791—1792 թվականներին, առաջ ու հետո։

Ի՞նչ թվականներ են սրանք Ֆրանսիայի պատմության մեջ։

— Ֆրանսական առաջին հեղափոխության աշխարհացունց տարիներն են։

Այնտեղ՝ հեղափոխություն, դասակարգային կռիվ, քաղաքացիական պատերազմ, ըմբոստացած մասսա, ծածանվող կարմիր դրոշակ, ծխացող բարիկադներ ու մարսելյոզ։

Այստեղ, մեզանում, պարսիկ խաների ու ֆառաշների տիրապետություն, հայ հոգևորական ու աշխարհիկ բռունցքների անողորմ հարստահարություն, անշշունջ տառապող բազմություն, խունկ ու կնդրուկ, աղոթքներ, աղոթքներ ու անվերջ աղոթքներ...

Այնտեղ՝ Միրաբո, Դանտոն, Ռոբեսպիեր, Մարա՞տ։

Այստեղ, մեզանում... Մերկե-Կուլաբի միայնակ Տեր-Մզրախ...

1919 թ. ապրիլ,
Երևան։

---

[1] «Վաղարշապատցի Հարություն Արարատյանի կյանքը», թարգմանեց ռուսերենից Պ. Պ., Թիֆլիս, 1892, էջ 63—67, Մերկե-Կուլաբ գյուղը, որ այժմ կոչվում է նաև պարզապես Կուլաբ, գտնվում է Երևանի նահանգի Սուրմալու գավառում։ Պոռչյանը կարծում է, որ գյուղի անունը Մերկե-Կուլաբ չպիտի լինի, այլ Ներքի կամ Ներքին Կուլաբ։ Այս սխալ է։ Գյուղը կոչվում է Մերկե-Կուլաբ, որ քրդերեն նշանակում է մարգագետիններով առատ (չիմանով) Կուլաբ։